մասը յատկացնել օժիտ պատրաստելու։ Այդ մի ձեռնարկութեամբ արդէն ճանապարհ էր հարթուած, որպէսզի գնման սովորութիւնն աստիճանաբար չքանար. որովհետև կարելի էր ենթադրել, որ օտերը ժամանակի ընթացքում, վարժուելով հարսի գնման վերաբերեալ ձեռք առած միջոցների գաղափարին, յետագայում միանգամայն համաձայնուէին ամբողջ «իրաւի» գումարը յատկացնելու օժիտին [1])։

Առաջ բերենք մի քանի օրինակներ հայոց սովորութեան իրաւունքից, որոնք թէև աղօտ, բայց և այնպէս որոշ չափով կարող են լուսաբանել, որ մեր ժողովրդի կեանքումն էլ օժիտի ու գլխագնի սովորութիւնները, համեմատելով վերոյիշեալ փաստերի հետ, նման պատկեր են ներկայացնում. օժիտի ու գլխագնի փոխադարձ առընչութիւնները նոյնանման նշանակութիւն են ունեցել կամ ունեն և նոյն իրաւաբանական հետևանքի են յանգում։

Գանձակի գաւառում այն գումարը, մօտաւորապէս 15—100 բուբլի, որ աղի հայրը վճարում է աղջկայ հօրը, կոչւում է երեսաջուր կամ մի շատ բնորոշ խօսքով պեժինքի փող, որովհետև այդ գումարի մի մասը ծախսւում է հարսնացուի օժիտի՝ բաժինքի վրայ [2])։

Զաւախքում հարսի օժիտը պատրաստւում է հաղեմնասու, սաչուի և երեստեանքի փողերով։ Աղջկայ հայրը ոչ միայն իրենից ոչինչ չի վճարում, այլ և այդ փողերից աշխատում է գողանալ [3])։

Վերոյիշեալ երկու օրինակներից պարզ հետևում է, որ գլխագնի փողերի մի մասը յատկացւում է օժիտի համար և դառնում հարսնացուի անձնական սեփականութիւն։

Զանգեզուրում, երբ խնամախօսներն ու պատգամները սակարկում են և որոշում, թէ որքան պէսք է աղջկայ հայրը վճարի, միևնոյն ժամանակ որոշում են, 'ի հարկէ

[1]) М. Ковалевскій—Древній законъ и современный обычай, т.-I. стр. 248.

[2]) Ե. Լալայեան—Գանձակի գաւառ, եր. 22.

[3]) Նոյն—Զաւախք, եր. 151.

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան